ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՑԱՆՕ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 91 - 92 (16486) ՇԱԲԱԹ, 19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՕՐԵՆՍԴԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆ ՍԿՍԵՑ ԻՆՆԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Նոյեմբերի 18-ին Քութայիսիում աշխատանքն սկսեց Վրաստանի իններորդ գումարման խորհրդարանը:

Նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Վրաստանի գործադիր իշխանության, երկրում հավատարմագրված դիվանագիտական կառույցների ներկայացուցիչները:

Օրենսդիր մարմնի կանոնակարգի համաձայն, նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստը բացեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

- Ընտրությունները կայացան: Անցկացվեցին փոքրիշատե խախտումներով, սակայն ազատ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Նոյեմբերի 18-ին Վրաստանի իններորդ գումարման խորհրդարանն իր անդրանիկ նիստում օրենսդիր մարմնի նախագահ ընտրեց «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստանի» կողմից առաջադրված 38-ամյա Իրակլի Կոբախիձեին:

Իրակլի Կոբախիձեն ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը, ապա ուսումը շարունակել Գերմանիայի Դյուսելդորֆի համալսարանում: Ունի իրավունքի դոկտորի գիտական աստիճան:

Աշխատանքային գործունեության մեկնարկում՝ որպես գիտաշխատող, գործել է Թբիլիսիի պետական համալսարանում, Թ.Ծերեթելու անվան պետության եւ իրավունքի ինստիտուտում, Կովկասի համալսարանում: Եղել է ԹՊՀ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԲՈԼՈՐ ՔԱՅԼԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆԸ»

Նոյեմբերի 17-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, կայացավ երկրի կառավարության ներկայիս կազմով եզրափակիչ նիստը:

Հանրագումարելով 2012 թվականի իշխանափոխությունից հետո երկրի գործադիր իշխանության կատարած աշխատանքները՝ Գիորգի Կվիրիկաշվիլին արդյունավետ գործունեության համար շնորհակալություն հայտնեց իրեն նախորդող վարչապետերին՝ Բիձինա Իվանիշվիլուն, Իրակլի Ղարիբաշվիլուն, կառավարության բոլոր անդամներին:

- Անցած չորս տարիների ընթացքում իրականացրինք գործեր, որոնք, վստահությամբ կարելի է ասել, նշանակալից էին

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

საქართველოს
იუსტიციის
სამინისტრო

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԳՈՒՄԲՈՒՐԴՈՅՈՒՄ ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻՆ ԲԱՑԵՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ-ԿԱՐԾԱԽ ՄԱՅՐՈՒՂՈՒՑ ԱՅԴ ԳՅՈՒՂ ՏԱՆՈՂ 10 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԸ ԿԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԻ

Երկրի տարածաշրջաններում շարունակվում է հասարակական կենտրոնների շինարարությունը: Նոյեմբերի 14-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Ախալքալաքի մունիցիպալիտետի Գումբուրդո գյուղում մասնակցեց երկրի մասշտաբով թվով 43-րդ հասարակական կենտրոնի բացման արարողությանը:

Գումբուրդոյի հասարակական կենտրոնը, գյուղի 665 ընտանիքների հետ միասին, կսպասարկի հարեւան Կիրովական, Հոկամ, Գոգաշեն, Ափնիայի, Քարցեբի եւ Ազմանա գյուղերի շուրջ 5000 բնակիչներին:

Հասարակական կենտրոնը մասնավոր եւ հանրային հատվածների արդյունավետ համագործակցության ակնհայտ օրինակ է, ինչը նշանակալիորեն տնտեսում է տեղացիների ժամանակն ու ֆինանսները: Այն տեղացիներին առաջարկում է պետական եւ մասնավոր հատվածի տարբեր տեսակի շուրջ 200 սպասարկումներ:

Արդարադատության նախարարության հասարակական կենտրոնների գլխավոր բնորոշիչը տե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱԿԱՅԱՆՆԵՐ ՊԵՏՔ ՉԵՆ»

Գյումրիում տեղակայված ռուսական ռազմակայանից բացի, Հայաստանում ռուսական նոր ռազմակայաններ ստեղծելու անհրաժեշտություն չկա: Այս մասին ասաց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ «Ռոսիա սեգոդնյա»-ին «Sputnik Արմենիա»-ի համար տված հարցազրույցում:

«Կարծում եմ՝ անհրաժեշտություն չկա, որովհետեւ ռազմակայանն ունի բոլոր հնարավորությունները ներառելու պահանջված տարրերը: Ուստի կարծում եմ, որ փոքր Հայաստանում մեկ ռազմակայանը բավարար է, պարզապես պետք է ռազմական հզորությամբ հագեցնել այն»,- ասաց Սերժ Սարգսյանը:

Գյումրի քաղաքի հյուսիսում տեղակայված է 102-րդ ռուսական ռազմակայանը, որը մարտական հերթապահություն է իրականացնում ԱՊՀ ՀՕՊ միասնական համակարգի շրջանակում: Հայաստանն ու Ռուսաստանը 2010 թվականի օգոստոսի 20-ին երկարացրել են կայանի տեղակայման պայմանագրի ժամկետը մինչեւ 2044 թվականը: Նախատեսվում է ընդլայնել ռազմակայանի աշխարհագրական եւ ռազմավարական պատասխանատվության ոլորտները: Կայանը համալրված է Ս-300Վ, Բուկ-Մ1-2 ԶՀՀ-ով, ՄիԳ-29 կործանիչներով, Մի-8ՄՏ ռազմատրանսպորտային եւ Մի-24Պ ուղղաթիռներով:

ՏԱՐԱԴՐԱՄ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՏԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վրաստանի կառավարության աշխատակազմը հայտարարություն է տարածել ազգային տարադրամի կուրսի փոփոխման կապակցությամբ եւ պարզաբանել այն պատճառները, որոնք հանգեցրել են դրան:

«Վրաստանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ երկրում գործում է լարիի լողացող կուրսը, որի փոփոխությունը կախված է ներքին եւ արտաքին մակրոտնտեսական գործոններից եւ սպասումներից:

Լարիի կուրսի ժամանակավոր փոփոխումը պայմանավորված է հետեւյալ գլխավոր գործոններով. հարեւան առեւտրատնտեսական գործընկեր երկրներում տեղական տարադրամի նշանակալի արժեզրկմամբ, վերջին մի քանի ամիսներին ելնելով ներկրումների ծավալներից, ինչը չհաջողվեց հավասարակշռել արտահանման երկր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

1995 թվականի նոյեմբերի 16-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ-պետությունները ընդունեցին Հանդուրժողականության սկզբունքների հռչակագիրը: 1996 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովը առաջարկեց անդամ երկրներին ամեն տարի նոյեմբերի 16-ը նշել՝ որպես Հանդուրժողականության (տոլերանտություն) միջազգային օր՝ կազմակերպելով համապատասխան միջոցառումներ:

Այդ օրվան նվիրված միջոցառում անցկացվեց Վրաստանի նախագահի նստավայրում, հանդուրժողականության թեմայով «Չընդհատվող բազմերանգություն» ցուցահանդեսներ եւ մրցույթներ կազմակերպվեցին Վրաստանի Ազգային արխիվում, Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության նախարարությունում:

Նոյեմբերի 17-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» խմբակցության նախաձեռնությամբ, Հանդուրժողականության օրվան նվիրված միջոցառում անցկացվեց նաեւ Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՐ ԴՐԵՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանում գործող օրենսդրության համաձայն, նորընտիր խորհրդարանի պատգամավորների լիազորությունների ճանաչումից անմիջապես հետո գործող կառավարությունը, վարչապետի գլխավորությամբ, վայր է դնում իր լիազորությունները:

Նոյեմբերի 18-ին, Վրաստանի իններորդ գումարման խորհրդարանի անդրանիկ նիստում, պատգամավորների լիազորությունների ճանաչումից հետո, Վրաստանի կառավարությունը՝ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու գլխավորությամբ, պաշտոնաթող եղավ:

«Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստանը»՝ որպես ընտրություններին հաղթող կուսակցություն, իրավասու է արդեն հաջորդ շաբաթ երկրի նախագահի ներկայացնելու նոր վարչապետի թեկնածությունը:

Նախնական տվյալներով, այդ պաշտոնում կներկայացվի Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածությունը:

Նրա թեկնածությունը ներկայացնելուց հետո, երկրի նախագահը յոթ օրվա ընթացքում այն ներկայացնելու է խորհրդարանին: Այդ յոթ օրվա ընթացքում վարչապետի թեկնածուն ընտրում է նախարարների թեկնածուներին եւ խորհրդարանին ներկայացնում նոր կառավարության կազմը:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԲՈԼՈՐ ՔԱՅԼԵՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մեր երկրի եւ մեր ժողովրդի համար: Դրա համար ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզ, նաեւ հատուկ ընդգծել մեր թիմից առաջին վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն բեկումնային փուլում նրա ներդրած ավանդի համար:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նաեւ իմ նախորդին՝ Իրակլի Ղարիբաշվիլուն, եւ բոլոր նրանց, ովքեր նրա հետ աշխատում էին,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Նրա հավաստմամբ, կառավարության համար ամենաարժեքավորը մարդն է, եւ հենց մարդու բարօրությանն էին ուղղված բոլոր քայլերը, որ ձեռնարկեց կառավարությունը:

Գ.Կվիրիկաշվիլու խոսքով, բոլոր ուղղությունների մեջ Վրաստանն ունի առաջընթաց՝ լինի ժողովրդավարության, թե տնտեսական առաջընթացի ցուցանիշ, եւ դա վկայում են միջազգային ինստիտուտների վարկանիշերը:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բացելով միջոցառումը՝ խմբակցության նախագահ Ռիմա Բերաձեն խոսեց վրաց ազգի հանդուրժողականության, վրացիների եւ տարբեր ազգային, կրոնական, էթնիկ փոքրամասնությունների միջեւ առկա համագոյակցության շուրջ: Ներկաներին ողջունեցին Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, Թբիլիսիի փոխքաղաքապետ Նինա Խատիսկացին, անվանի բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Օրվա առթիվ, Թբիլիսիի սակրեբուլոյի պատվոգրով պարգեւատրվեցին հինգ համայնքների ներկայացուցիչներ եւ «Գյուրջիստան» թերթի խմբագիր Իսլամ Ալիեւը: Ընթերցողին հիշեցնենք, որ անցյալ տարի, Հանդուրժողականության օրվա առիթով, «Վրաստան» թերթին շնորհվել էր «Հանդուրժողականության աջակից» տիտղոսը:

Սակրեբուլոյի սրահում ցուցադրվեցին ոչ վրաց նկարիչների թբիլիսյան մոտիվներով աշխատանքներ: Նույն օրը, կրկին սակրեբուլոյի նախաձեռնությամբ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մասնակցեցին Շոթա Ռուսթավելու ծննդյան 850-ամյակին նվիրված «Արտագրիր «Ընձենավորը» նախագծին:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Թերթի հաջորդ համարում առավել մանրամասն տեղեկատվություն կներկայացնենք Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված միջոցառումների մասին:

ՏԱՐԱԴՐԱՄ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՏԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներում գների նվազեցման պատճառով արտահանման ծավալների հետ առնչվող տարադրամային դուրսբերումների ավելացմամբ, լարիի կուրսի կապակցությամբ կեղծ սպասումներով, ինչը, ցավոք, նպաստում է տարբեր խմբերի կողմից այդ թեմայի շահարկմանը:

Միաժամանակ նշանակալի է, որ, վերոնշյալ գործոններին զուգահեռ, մեր երկրում սպառողական գների ինդեքսը չի ավելանում: Ավելին, անցյալ ամիս «Վրացստատը» վավերացրեց գների նվազեցում:

Ամենասուր հիմնախնդիրը, որը ներկա դրությամբ ծառացած է Վրաստանի բնակչության առջեւ, հիմնված է վարկային պորտֆելի գերավելորդ դոլարիզացման վրա: Հենց այդ պատճառով, Վրաստանի կառավարությունը եւ Ազգային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամի հետ խորհրդատվությունների արդյունքում, ծրագրում է ընդունել մի շարք համալիր միջոցառումներ, այդ թվում՝ հաջորդ տարվա բյուջեում հիմնական շեշտը կդրվի տնտեսական աճի արագացման վրա, կավելացվի ենթակառույցային նախագծերի ֆինանսավորումը: Միաժամանակ, կիրականացվի վարչական ծախսերի զգալի կրճատումը, եւ 2017 թվականի բյուջեն կկողմնորոշվի կայուն եւ հաստատուն ֆինանսավարկ միջավայրի ամրապնդմանը: Նման մոտեցում կցուցաբերվի նաեւ հաջորդ տարիների բյուջեներում:

Մոտ ժամանակներում, կիրապակվի գործողությունների միասնական ծրագիրը, ինչը, մյուս միջոցառումների հետ միասին, նախատեսում է շուկայական մեխանիզմների վրա հիմնված, դոլարիզացման հետեւողական նվազեցմանն ուղղված կոնկրետ քայլերի իրականացում:

Արդյունքում, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճը կարագանա: Բնակչության մեծ մասը կախված չի լինի արտաքին բացասական գործոններով պայմանավորված լարիի կուրսի կարճաժամկետ տատանումներից, եւ տնտեսական իրավիճակը նշանակալիորեն կբարելավվի»,- ասված է կառավարության հայտարարության մեջ:

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ԶԱԶԱ ՎԱՇԱՂՄԱԶԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՌԵՆԵ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

Նոյեմբերի 18-ին կրոնի հարցերով պետական գործակալությունում ղեկավար Զազա Վաշաղմաձեն հանդիպում ունեցավ Եվրասիայի տարածաշրջանային ավետարանչական հայ եկեղեցու նախագահ Ռենե Լեւոնյանի հետ:

Հանդիպման ընթացքում հյուրը գործակալության ղեկավարին տեղեկացրեց Մերձավոր Արեւելք կատարած իր այցի մասին: Մասնավորապես, Սիրիա եւ Լիբիա, նաեւ Կոսովո ծրագրված այցերի մասին: Ռենե Լեւոնյանը հետաքրքրվեց Վրաստանում կրոնական հանդուրժողականության եւ ազատության հարցերով:

Զազա Վաշաղմաձեն հյուրին ծանոթացրեց կրոնի ազատության եւ հանդուրժողականության ուղղությամբ պետության կողմից իրականացված գործողություններին, ինչը նպաստել է Վրաստանում կրոնական տարբեր ուղղությունների ներդաշնակ համագոյակցությանը:

Ռենե Լեւոնյանը նշեց, որ վրացական պետությունը հաջողությունների է հասել ժողովրդավարության զարգացման ուղղությամբ եւ ընդգծեց այդ տեսանկյունից կրոնի հարցերով պետական գործակալության կարեւոր նշանակությունը: Նրա խոսքով, գործակալության կողմից իրականացվող գործունեությունը, մասնավորապես, ֆինանսական եւ գույքային օգնության տեսանկյունից, տարածաշրջանում նմանակը գոյություն չունի: Հյուրը Զազա Վաշաղմաձեին եւ զրույցին մասնակցող, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայթուրյանին հրավիրեց Ֆրանսիա, մասնակցելու միջազգային կազմակերպության (CREDO)՝ «Հետազոտությունների եւ փաստաթղթերի կենտրոնի» ամենամյա գիտական խորհրդաժողովին:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Թբիլիսիի ավետարանչական եկեղեցու հոգեւոր հովիվ, վերապատվելի Կարեն Խաչատրյանը:



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԱՄՆ ՊՈՒՏԻՆԸ ԵՎ ԹՐԱՄՓԸ ԿԱՐԵՎՈՐԵՑԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ ՋԱՆՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը եւ ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը նոյեմբերի 14-ին հեռախոսազրույց են անցկացրել փոխադարձ պայմանավորվածությամբ:

Այդ կապակցությամբ, հրապարակած հաղորդագրության մեջ նշվել է, որ Պուտինը եւ Թրամփը ոչ միայն համակարծիք են եղել ռուս-ամերիկյան հարաբերությունների ներկայիս լարված վիճակի հարցում, այլեւ հանդես են եկել դրանց կարգավորման ուղղությամբ ակտիվ համատեղ աշխատանք ծավալելու օգտին: Պուտինը եւ Թրամփը համակարծիք են եղել նաեւ թիվ 1 ընդհանուր թշնամու՝ միջազգային ահաբեկչության եւ ծայրահեղականության դեմ պայքարում ջանքերի միավորման անհրաժեշտության հարցում:

ԲՈՒԼՂԱՐԻԱ ՆԱԽԱԳԱՀ ԴԱՐՁԱՎ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՌՈՒՄԵՆ ՌԱԴԵՎԸ

Բուլղարիայի Սոցիալիստական կուսակցության թեկնածու, ռազմաօդային ուժերի նախկին հրամանատար Ռումեն Ռադեւը հաղթանակել է երկրի նախագահական ընտրություններում:

Ռադեւի օգտին քվեարկել է ընտրողների 59,35 տոկոսը, իսկ նրա մրցակցի՝ Բուլղարիայի ներկայիս խորհրդարանի խոսնակ Ցեցկա Ցաչեւայի օգտին, որին աջակցում է իշխող «Քաղաքացիներ՝ հանուն Բուլղարիայի եվրոպական զարգացման» կուսակցությունն ու կոալիցիայի գործընկերները՝ ընտրողների 36,17 տոկոսը: Իշխող «Քաղաքացիներ՝ հանուն Բուլղարիայի եվրոպական զարգացման» կուսակցությունն արդեն ընդունել է իր պարտությունը, իսկ կուսակցության առաջնորդ, վարչապետ Բոյկո Բորիսովը հայտարարել է մոտ օրերս հրաժարական տալու մտադրության մասին:

ՄՈԼԴՈՎԱ ՆԱԽԱԳԱՀ Է ԸՆՏՐՎԵԼ ԻԳՈՐ ԴՈԴՈՆԸ

Ռուսաստանի հետ սերտ կապեր հաստատելու օգտին հանդես եկող Մոլդովայի Հանրապետության Սոցիալիստների կուսակցության (ՄՀՍԿ) ղեկավար Իգոր Դոդոնը հաղթանակ է տարել երկրի նախագահական ընտրություններում: Նա ստացել է ձայների 52,6 տոկոսը (834 հազար 70 ձայն): Նրա մրցակիցը՝՝ եվրոպամետ ընդդիմության միասնական թեկնածուն, Գործողության եւ համերաշխության կուսակցության ղեկավար Մայա Սանդուն, ապահովել է ընտրողների 47,3 տոկոսի (749 հազար 720 ձայն) աջակցությունը:

ԹՈՒՐՔԻԱ ՀԱՆՐԱՔՎԵ՝ ԵՄ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Եվրամիությանն անդամակցելու գործընթացի շուրջ վերջին շրջանում հնչեցված կարծիքների առնչությամբ, խիստ խոսքեր է հնչեցրել կառույցի եւ դրա անդամների մասին:

Էրդողանը մեղադրել է Եվրամիությանը Թուրքիային տված խոստումները չկատարելու մեջ:

Թուրքիայի նախագահը դատապարտել է Արեւմուտքին մահապատժի վերականգնման պարագայում ԵՄ բանակցային գործընթացը դադարեցնելու մասին հայտարարությունների համար: Էրդողանը նշել է, որ իր ժողովրդի ճակատագիրը ոչ թե Եվրոպայի, այլ հենց իրենց ձեռքում է:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Նոյեմբերի 11-ին Վրաստանի կառավարությունը հաստատեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու կողմից ներկայացված 2016-2017 թվականների բաց կառավարման գործընկերության գործողությունների ծրագիրը:

2016-2017 թվականների համար նախատեսված այդ ծրագիրը թվով երրորդն է: Դրանում ներառվել են 24 պարտավորություններ, որոնց կատարման պատասխանատվությունը դրվել է 24 գերատեսչությունների վրա: Դրանց թվում են նաեւ այն գերատեսչությունները, որոնք նախորդ ծրագրով ոչ մի պարտավորություն չէին ստանձնել:

Ծրագրի նորամուծություններից մեկը դրանց մեջ մունիցիպալիտետների ներգրավումն է, ինչը ավելացվեց ծրագրի հանրային քննարկումների ընթացքում: Ինչպես նշեց Թեա Ծուլուկիանին, Գործողության ծրագրի շրջանակներում, կհիմնվի «112»-ի այլընտրանքային ալիքը՝ բջջային ապլիկացիան, ինչը թույլ կտա հեշտությամբ հայտնաբերել բաժանորդի գտնվելու վայրը: Նախարարի խոսքով, ծրագրում առաջին անգամ ներգրավվել է նաեւ նորամուծությունների գործակալությունը:

ՏԱՐԱԴՐԱՄ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է

Թբիլիսիի քաղաքային բյուջեում կրճատվում է 2017 թվականի սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետարանի առողջապահության եւ սոցիալական սպասարկման ծառայության պետ Գելա Չիվիաշվիլին, սոցիալական ծրագրերի ֆինանսավորման կրճատումը պայմանավորված է կոմունալ ծախսերի նպաստավորման նոր կարգի ներդրմամբ:

Նոր կանոնակարգով, կոմունալ սպասարկումների վճարման համար միջոցները փոխանցվելու են ոչ թե սոցիալապես անպաշտպաններին, այլ համապատասխան կազմակերպություններին: Գելա Չիվիաշվիլու խոսքով, քաղաքապետարանը 100 տոկոսով մարում է կոմունալ ծախսերը, սակայն 106 լարի լիմիտի շջանակներում:

- Բնակչության համար, որի սոցիալական վարկանիշի միավորը 70 հազարից պակաս է, նպաստավորումը կազմում է 106 լարի, սակայն վճարումն իրականացվում է ըստ փաստական ծախսումների: Այսինքն, եթե սպառողը ծախսել է 30 լարիի էլեկտրաէներգիա, ապա քաղաքապետարանը ինչու պետք է վճարի 106 լարի: Ուստի, որքան ծախսի բնակչությունը, այնքան էլ քաղաքապետարանը կմարի ծախսերը,- հայտարարեց ծառայության պետը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՆ ԻՐԵՆՔ ԿԸՆՏՐԵՆ ՅԱՆԿԱԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարությանն առընթեր գործող Վանո Խուխունաիշվիլու անվան տարածքային կարգավորման եւ արդյունավետ կառավարման համակարգի բարեփոխման կենտրոնի կազմակերպմամբ, անցկացվեց տեղական ինքնակառավարման աշխատակիցների անընդմեջ ուսուցման համակարգի շնորհանդեսը:

Միջոցառմանը մասնակցեցին եւ ելույթ ունեցան Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարար Թենգիզ Շերգլաշվիլին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի ղեկավարի տեղակալ Շոմբի Շարպն եւ Հարավային Կովկասում Շվեյցարիայի համագործակցության գրասենյակի տնօրեն Օլիվիյե Բուրկը: Համակարգը նորարարական մեխանիզմ է, որի նպատակն է մունիցիպալիտետները ապահովել աշխատակիցների կարիքներին նպատակաուղղված որակյալ ուսումնական ծրագրերով:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԶՈՒՐԱԲ ԱԲԱՇԻՁԵ. «ՎԱՂ Է ԽՈՍԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ»

Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ կապերի հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն վերստին հայտարարել է, որ «Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումն օրակարգում չէ, քանի որ Աբխազիային եւ Հարավային Օսիային վերաբերող հարցերում առաջընթաց չկա»:

Աբաշիձեն այս հայտարարությունն արել է այն բանից հետո, երբ Վրաստանի եւ Ռուսաստանի գործարարների հանդիպմանը, որն ընթանում էր Թբիլիսիում, քանիցս հայտարարվել է երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման անհրաժեշտության մասին:

- Այս հարցն օրակարգում չկա եւ չի կարող քննարկվել, քանի որ Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանների հետ կապված ոչ մի առաջընթաց չկա: Եթե այդ հարցերում առաջընթաց լինի, ապա ինչ-որ փուլում այդ հարցը կարող է դրվել օրակարգում, բայց ոչ այսօր,- հայտարարեց Զուրաբ Աբաշիձեն:



ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՐԱԿՈՉԸ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ

Վրացական բանակում պարտադիր զորակոչը վերականգնվելու է: Այդ մասին հայտնեց Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան:

- Նպատակահարմար ենք համարում պարտադիր զինվորական զորակոչի վերականգնումը, բայց՝ նորացված ձեւով: Մասնավորապես, զորակոչիկները լիակատար նախնական պատրաստություն կանցնեն... Նրանց ամսական աշխատավարձը կավելանա մինչեւ 50 լարի (շուրջ 20 դոլար), նրանք հնարավորություն կունենան նաեւ օգտվել ոչ աշխատանքային օրերից,- հայտարարեց Լեւան Իզորիան՝ ելույթ ունենալով իր համար նոր պաշտոնում 100-օրյա աշխատանքի արդյունքների մասին հաշվետվության ժամանակ:

Նշենք, որ անցած ամառ Իզորիայի նախորդը՝ Թինա Խիդաշելին, չեղարկել էր պարտադիր զորակոչը: Սակայն Խիդաշելու այդ որոշումը որակվել էր որպես քաղաքական քայլ, որը ոչ ոքի հետ նախօրոք համաձայնեցված չի եղել:

ԳԻԳԻ ՈՒԳՈՒԼԱՎԱՅԻՆ ՆԵՐՈՒՄ ՉԻ ՇՆՈՐՀՎԻ

Ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահի մամուլի խոսնակ էկա Միշվելաձեն, նախագահը Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավային ներում շնորհելու մտադրություն չունի:

- Այդ հարցին նախագահը պատասխանել է մոտ մեկ տարի առաջ, երբ հասարակության մի մասը նրան այդ հարցով նամակ էր առաքել: Դրանից հետո, Գիորգի Մարգվելաշվիլու դիրքորոշումը չի փոխվել: Նախագահը չի ընդունում որոշումներ, որոնք բանտարկյալներից որեւէ մեկին կարող են արտոնյալ վիճակում դնել,- հայտարարել է մամլո խոսնակը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (18 նոյեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ԱՄՆ դոլարի եւ լարիի հարաբերակցությունը. առքը - 2,455, վաճառքը - 2,525, եվրո-լարի առքը - 2,580, վաճառքը - 2,705, դրամ-լարի՝ առքը - 0,0039, վաճառքը - 0,0056:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ ԿՐԾԱՆԻՍԻՈՒՄ

Նոյեմբերի 10-ին, Թբիլիսիի մերձակա «Վազիանի» ռազմակայանում, ՆԱՏՕ-ի եւ Վրաստանի Վարժանքների ու գնահատման համատեղ կենտրոնի (JTEC), Կրծանիսիի տարածքում մեկնարկեցին «ՆԱՏՕ-Վրաստան-2016» վարժանքները: Դրանք կտեւեն մինչեւ նոյեմբերի 20-ը:

Ինչպես տեղեկացրել են Վրաստանի պաշտպանության նախարարությունից, ընդգրկուն վարժանքներին մասնակցում են ՆԱՏՕ-ի 12 անդամ եւ երկու գործընկեր երկրներ: Վարժանքներին մասնակցում է 250 զինվորական: Համատեղ վարժանքների գլխավոր նպատակը Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի զինված ուժերի փոխհամատեղելիության ապահովումն է:

Ռազմական գերատեսչությունը նշում է, որ «ՆԱՏՕ-Վրաստան-2016» վարժանքները թվով երկրորդ վարժանքներն են, որոնք անցկացվում են ՆԱՏՕ-Վրաստան միջոցառումների փաթեթի (SNGP) շրջանակներում»:

Նոյեմբերի 17-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եղան զորավարժարանում եւ ծանոթացան վարժանքների ընթացքի հետ:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ «ՈՒՂՂՎԱԾ ՉԷ ՈՐԵՎԷ ՄԵԿԻ ԴԵՄ»

Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի համագործակցությունն «ուղղված չէ որեւէ մեկի դեմ»: Այդ մասին նոյեմբերի 17-ին, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ միասին այցելելով «ՆԱՏՕ-Վրաստան-2016» վարժանքների շրջան, հայտարարեց երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

- Մեր նպատակը պաշտպանունակության բարձրացումն է, վրացական բանակի ուսուցումը ՆԱՏՕ-ի չափորոշիչներին համապատասխան: ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի համագործակցությունը միտված է տարածաշրջանի կայունության ու խաղաղության ապահովմանը, ինչը պետք է համապատասխանի բոլոր կողմերի շահերին,- հայտարարեց վարչապետը:

Իր կողմից, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նույնպես հավատացրեց, որ Վրաստանի պաշտպանունակության ամրապնդումն «ուղղված չէ որեւէ մեկի դեմ»:

Մինչդեռ ՌԴ ԱԳ նախարարությունն օրերս արված մեկնաբանության մեջ հայտարարել է, որ Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի հերթական զորավարժություններն սպառնում են տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը:

- Ուշադրություն ենք դարձրել Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի հերթական զորավարժություններին, որոնց ավելի քան 250 զինծառայողներ են մասնակցում 13 երկրներից,- նշել են նախարարությունում:- Ընթացիկ տարում դրանք այդօրինակ արդեն երրորդ վարժանքներն են Վրաստանի տարածքում:

- Ռուսաստանն այդօրինակ ակտիվությունը լուրջ սպառնալիք է համարում տարածաշրջանի կայունության ու խաղաղության համար,- ընդգծել են ՌԴ ԱԳՆ-ում:

- ՆԱՏՕ-ում չեն թաքցնում, որ Թբիլիսիի հետ ներկայիս ռազմական գործընկերությունը դիտարկվում է որպես Ռուսաստանի «զսպման» քաղաքականության բաղկացուցիչ մասը,-նշել են նախարարությունում:- Այդ համատեքստում այն դերը, որն ստանձնել է Վրաստանը, բարդացնում է ռուս-վրացական հարաբերությունների առողջացման դրական գործընթացը:

ՕՐԵՆՍԴԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆ ՍԿՍԵՑ ԻՆՆԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

միջավայրում: Արդյունքում, Վրաստանն ունի ժողովրդավարական սկզբունքով ընտրված 150 պատգամավոր, ովքեր կձեւավորեն օրենսդրական եւ գործադիր առաջիկա իշխանությունները,- հայտարարեց երկրի նախագահը: Նա պատգամավորներին շնորհավորեց ընտրություններում հաղթելու կապակցությամբ եւ մաղթեց հաջողություններ:

Իր խոսքում, նախագահն անդրադարձավ նաեւ իշխանության տարբեր ճյուղերի միջեւ համագործակցության անհրաժեշտության մասին, ներկայացրեց խորհրդարանի հետ համագործակցության նոր ձեւաչափը եւ հանդես եկավ մի շարք նախաձեռնություններով: Նախագահը իր խոսքում անդրադարձավ նաեւ երկրի սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությանը՝ նշելով, որ երկրին ներկայումս պահանջվում է իշխանության ճյուղերի հավասարակշռության մեխանիզմների ամրապնդում եւ ոչ թե իշխանության բոլոր ճյուղերի մի ձեռքում կենտրոնացումը: Նախագահի հավաստմամբ, իշխանության ճյուղերի հավասարակշռության մեխանիզմները պետք է հստակորեն ներկայացվեն սահմանադրությունում:

Գիորգի Մարգվելաշվիլու խոսքով, երկրի գլխավոր առաջնահերթություններն են եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման ուժեղացումն ու բռնազավթված տարածքների ազատումը, դրանց չճանաչման քաղաքականության խորացումը, տնտեսական առաջընթացի ապահովումը:

Նորընտիր խորհրդարանի առջեւ հաշվետվությամբ հանդես եկավ նաեւ Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան: Վերջինիս ելույթից հետո, Վրաստանի խորհրդարանը՝ 146 ձայնով, որոշում ընդունեց ճանաչել նորընտիր պատգամավորների լիազորությունները:

Դրանից հետո, տեղի ունեցավ իններորդ գումարման խորհրդարանի պատգամավորների երդման արարողությունը, որից հետո պատգամավորները ձեռնամուխ եղան խորհրդարանի նախագահի ընտրությանը: Խորհրդարանական մեծամասնության կողմից այդ պաշտոնի համար առաջադրվեց Իրակլի Կոբախիձեի թեկնածությունը:

Գաղտնի քվեարկությամբ պատգամավորները՝ 118 կողմ եւ 3 դեմ ձայներով, Իրակլի Կոբախիձեին ընտրեցին Վրաստանի խորհրդարանի նախագահ:

Խորհրդարանը նախագահի առաջին տեղակալ ընտրեց Թամար Չուգոշվիլուն, տեղակալներ՝ մեծամասնությունից Զվիադ Ջիձիգուրիին, Գիորգի Վոլսկուն, Իլիա Նակաշիձեին, փոքրամասնությունից՝Սերգի Կապանաձեին եւ Իրմա Ինաշվիլուն:

Նոր գումարման խորհրդարանում կգործի հինգ խմբակցություն:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ասոցիացված պրոֆեսոր: Միաժամանակ, աշխատել է մի շարք ոչ կառավարական կազմակերպություններում, մասնավորապես, «Բաց հասարակություն-Վրաստան» կազմակերպությունում, եղել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի տարածաշրջանային զարգացման հարցերի փորձագետ, Վրաստանում Եվրախորհրդի ներկայացուցչության ռազմավարական ծրագրավորման հարցերի փորձագետ:

2015 թվականի հունվարից «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստանի» գործադիր քարտուղարն է եւ քաղխորհրդի անդամը:

Տիրապետում է անգլերենին, գերմաներենին եւ ռուսերենին:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԳՈՒՄԲՈՒՐԴՈՅՈՒՄ ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻՆ ԲԱՑԵՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ-ԿԱՐԾԱԽ ՄԱՅՐՈՒՂՈՒՑ ԱՅԴ ԳՅՈՒՂ ՏԱՆՈՂ 10 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԸ ԿԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ղական կարիքների կարգավորմանն ուղղված կողմնորոշումն է: Հասարակական կենտրոնները սպառողներին առաջարկում են բազմատեսակ սպասարկումներ, դյուրացված ընթացակարգեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ եւ արդի ենթակառույցներ:

Գումբուրդոյում, հասարակական կենտրոնի բացմամբ, վերոնշյալ գյուղերի բնակիչների համար մատչելի դարձան ոչ միայն հանրային սպասարկումները, այլեւ «Մագթիի» եւ «Լիբերթի բանկի» մատուցած ծառայությունները, ինչը կենսաթոշակառուներին առանց գյուղից դուրս գալու կենսաթոշակի ստացման, իսկ երիտասարդներին՝ առանց կաբելի ենթակառույցներից օգտվելու հնարավորություն կտան: Մինչ այդ, գյուղում բանկի եւ բջջային օպերատորի գրասենյակներ չկային: Հետայսու, Գումբուրդոյում, առանց գյուղից դուրս գալու, արդարադատության տան, գյուղատնտեսության նախարարության, կրթության եւ գիտության նախարարության (օրինակ՝ դպրոցական ատեստատների ստացումը), սոցիալական գործակալության, «Մագթիի» (այդ թվում՝ առանց կաբելի համացանց) եւ «Լիբերթի բանկի» (այդ թվում՝ կենսաթոշակների ստացում) մատուցած բոլոր սպասարկումները կլինեն մատչելի: Հասարակական տանը կգործեն նաեւ համակարգիչներից անվճար օգտվելու դահլիճն ու գրադարանը, հանդիպումների սենյակը, որից գյուղի բնակիչները կարող են օգտվել նույնպես անվճար, Skype սենյակը, արագ վճարման սարքերը եւ այլն:

- Գումբուրդո գյուղում ապրում են Վրաստանի հայազգի քաղաքացիներ: Երբ խոսքը պետական եւ մասնավոր հատվածների մատչելիությանն էր վերաբերում, ապա նրանց առջեւ ծառանում էին նույնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք կան Վրաստանի մյուս խոշոր գյուղերում: Այսօր կարող ենք ասել, որ կենտրոնական պետական կառույցները առաջին անգամ մուտք գործեցին այս գյուղ, եւ տեղի բնակիչներին տրվեց այնպիսի քանակության ու որակի սպասարկումներից օգտվելու հնարավորություն, ինչից օգտվում են մեծ քաղաքների բնակիչները: Պետական սպասարկումները, առանց կաբելի համացանցը, գրքերն ու էլեկտրոնային գրադարանը միայն խոշոր քաղաքների պերճանքը չպետք է լինեն,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Նա իր ելույթում հայտարարեց, որ մոտ ժամանակներում կառավարության օգնությամբ կասֆալտապատվի Ախալքալաքի-Կարծախ ավտոմայրուղու Գումբուրդո տանող 10 կմ ճանապարհահատվածը: Բացի այդ, կսկսվի նոր ավտոճանապարհի շինարարություն՝ Ափնիայից մինչեւ Վարձիա:

Ներկա դրությամբ, Գումբուրդոյից բացի, հասարակական կենտրոնների սպասարկումներից Վրաստանի մասշտաբով օգտվում են 42 գյուղերի բնակիչներ: Մասնավորապես, հասարակական տներ են գործում Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի Փոկա, Բարալեթի, Վալե բնակավայրերում: Վրաստանի մասշտաբով, հասարակական կենտրոններում աշխատում է շուրջ 200 տեղացի եւ, ներկա դրությամբ, այդ կենտրոնների կողմից մատուցվել է շուրջ 250 հազար սպասարկում:

Հասարակական կենտրոնների շինարարության նախագիծը իրականացվում է Եվրամիության ֆինանսավորմամբ:

Մեր հատուկ թղթակից

შემოსავლების სამსახური

ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ» ՀԱՂԹՈՂ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 10-11-ը Թբիլիսիում, «Հոթելս ենդ պրեֆերենս հոլդինգ Թբիլիսի» հյուրանոցում անցկացվեց 9-րդ տարածաշրջանային՝ Վրաստանի Կիբերանվտանգության ու ՏՀՏ նորարարության համաժողովը (GITI): Վերոնշյալ համաժողովին Վրաստանի եկամուտների ծառայության տեխնոլոգիական տեղեկատվությունների կենտրոնը ներկայացրեց երեք նախագիծ (IT).

* Ցուցադրական ուսումնական էջը - Demo-eservices.rs.ge

* Միասնական գանձատան կոդը

* Բջջային ապլիկացիա- RS.GE-ն



Բջջային ապլիկացիա- RS.GE-ն «Ամենատարածված էլեկտրոնային սպասարկման» անվանակարգում արժանացավ պարգեւի:

Ներկայումս մատչելի է բջջային ապլիկացիա RS.GE - version 2-ը, իսկ մոտ ապագայում ծրագրվում է նոր տարբերակի (version 3) կիրարկումը՝ հետեւյալ նոր գործառույթներով.

* Սերվիս-կենտրոնների եւ ձեւակերպման տնտեսական գոտիների մասին տեղեկատվություն,

* Նոր ապրանքագիրների գրանցում/առաքում,

* Համեմատության ակտի ստուգում (մնացորդ, մասնաբաժին, ավելորդ մաս),

* Օբյեկտի տոմսակի ստուգում/խմբագրում,

* Online վճարում:

Այս տարի միջոցառմանը մասնակցում էին ռեկորդային թվով հյուրեր: Համաժողովին մասնակցեցին 20 երկրների ավելի քան 500 ներկայացուցիչներ:

Միջոցառումն ավարտվեց տարվա լավագույն IT նախագծի պարգեւատրման արարողությամբ, որի ընթացքում 15 անվանակարգերում հանրային եւ մասնավոր հատվածի կողմից ներկայացվել էին ավելի քան 50 IT նախագծեր:

Նշենք, որ Հայաստանի տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը» (ՀԿՏՀ) հաղթող է ճանաչվել «Լավագույն տարածաշրջանային համայնքային էլ. ծառայություն» անվանակարգում:

ՀԻԻԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Doing Bisiness-Ի ՎԱՐԿԱՆԻՇԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՅՈՒՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ

Նոյեմբերի 9-10-ին ուկրաինական Լվով քաղաքում անցկացվեց ՎՈՒԱՄ-ի (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) առեւտրի եւ փոխադրումների աջակցության նախագծի կառավարման խորհրդի 25-րդ նիստը, որին մասնակցում էին ՎՈՒԱՄ-ի անդամ երկրների մաքսային վարչակազմերի ղեկավարներ:

Նիստի շրջանակներում, կողմերը քննարկեցին անդամ երկրների առեւտրի եւ փոխադրումների աջակցության տեսանկյունից առկա իրավիճակը, քննարկեցին նաեւ նախագծի շրջանակներում ընթացիկ հարցեր: Մասնավորապես, կողմերը պայմանավորվեցին մաքսային վերահսկողության արդյունքների փոխընդունման արձանագրության վերջնական խմբագրության հարցում, որը ծրագրվում է ստորագրել ընթացիկ տարվա դեկտեմբերի առաջին կեսին, Կիեւում անցկացվելիք անդամ երկրների վարչապետերի հանդիպմանը: Միաժամանակ, համաձայնեցվեցին կողմերի դիրքորոշումները ՎՈՒԱՄ-ի անդամ երկրների տարածքով ապրանքի եւ տրանսպորտային միջոցների տարանցիկության աջակցության պայմանագրի նախագծի հարցում: Կողմերը նաեւ պայմանավորվեցին, որ Համաշխարհային բանկի Doing Bisiness վարկանիշում, ՎՈՒԱՄ երկրների վարկանիշի բարելավման նպատակով, յուրացնեն Վրաստանի փորձը եւ, այդ նպատակով, Վրաստան առաքեն հատուկ պատվիրակություններ եւ աշխատանքային խմբեր: